Հայաստանի Հանրապետության
ոստիկանություն

ԵԱՀԿ Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության ոստիկանության և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի միջև համագործակցության մասին հուշագրի

Ներքոստորագրյալ Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը (այսուհետ՝ Ոստիկանություն) և Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունն՝ ի դեմս իր Երևանյան գրասենյակի (այսուհետ՝ ԵԱՀԿ),

համոզված լինելով Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարական ոստիկանության զարգացման կարևորության մեջ,

վերհիշելով Ոստիկանության և ԵԱՀԿ-ի միջև երկարատև համագործակցությունը, մասնավորապես ոստիկանության գործունեության նկատմամբ բնակչության վստահության բարձրացման, համայնքային ոստիկանության, հասարակական կարգի պահպանության և ոստիկանական կրթության ասպարեզում,

հաշվի առնելով 2008 թվականի նոյեմբերին ԵԱՀԿ-ի և Ոստիկանության միջև կնքված Համագործակցության մասին հուշագիրը (այսուհետ՝ 2008 թ.-ի Հուշագիր),

անդրադառնալով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 1-ի թիվ 354-Ն «ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թվականների բարեփոխումների ծրագրի հայեցակարգին հավանություն տալու մասին» որոշմանը,

ընդգծելով բարեփոխումների իրականացման արդյունավետության, ինչպես նաև Ոստիկանության գործունեության գնահատման արդի չափանիշների ներդրման կարևորությունը՝ Ոստիկանության գործունեության նկատմամբ բնակչության վստահության բարձրացման տեսանկյունից,

կարևորելով Ոստիկանության կրթական համակարգի արդիականացումը՝ միջազգային հաջողված փորձի հաշվառմամբ, Ոստիկանության կրթական

հաստատություններում թեստավորման և ընդունելության անաչառությունը, ինչպես նաև ոստիկանության դասախոսական կազմի վերապատրաստումը ուսուցման արդի մեթոդների գծով,

ընդունելով համայնքային ոստիկանության մոդելի օգտակարությունը Հայաստանի Հանրապետության համար, և այդ մոդելի ներդրման ուղղությամբ համակողմանի մոտեցման անհրաժեշտությունը,

շեշտելով ոստիկանության կողմից հասարակական կարգի պահպանության ոլորտում ժողովրդավարական մեթոդները խթանելու անհրաժեշտությունը՝ հավաքների իրական ազատությունը երաշխավորելու համար, ինչպես նաև համապատասխան ուսուցման անհրաժեշտությունը,

վերահաստատելով Ոստիկանության ընթացիկ բարեփոխումների ներքո վերոհիշյալ ոլորտների վրա ուշադրությունը կենտրոնացնելու անհրաժեշտությունը,

հաշվի առնելով, որ ԵԱՀԿ-ն կարող է նպաստել նշված ոլորտների զարգացմանը,

համաձայնեցին հետևյալի մասին՝

Հոդված 1. Ոստիկանության բարեփոխումների բաժնի ստեղծումը

1.1. Ոստիկանության կառուցվածքում կստեղծվի Ոստիկանության բարեփոխումների բաժին՝ Ոստիկանության բարեփոխումների գործընթացը համակարգելու և 2011 թվականից ի վեր ընկած ժամանակաշրջանի համար բարեփոխումների քաղաքականությունը մշակելու համար:

1.2. Ոստիկանության բարեփոխումների բաժնի անձնակազմում կընդգրկվեն Ոստիկանության բարեփոխումների իրականացման գործընթացում արդեն իսկ ներգրավված աշխատակիցներ:

1.3. Ոստիկանության բարեփոխումների բաժնի ստեղծման և գործունեության համար ԵԱՀԿ-ն կտրամադրի անհրաժեշտ աջակցություն և ուղղորդում:

Հոդված 2. Ոստիկանության մասին հասարակական կարծիքի գնահատումը

2.1. Ոստիկանությունը կվերանայի իր կատարողականի գնահատման չափորոշիչները՝ իբրև հիմնական չափորոշիչներից մեկը ընդունելով հասարակական կարծիքը՝ բացահայտված հասարակական կարծիքի հարցումների միջոցով, որոնք կիրականացվեն համապատասխան անկախ գործակալությունների/ընկերությունների կողմից:

2.2. ԵԱՀԿ-ն կաջակցի Ոստիկանությանը՝ հասարակական կարծիքի պարբերական հարցումներ կազմակերպելու գործում:

2.3. Հասարակական կարծիքի հարցումների մեթոդաբանությունը մշակվելու է անկախ գործակալության/ընկերության կողմից՝ Ոստիկանության և ԵԱՀԿ-ի համապատասխան փորձագետների հետ խորհրդակցելու միջոցով:

2.4. Հասարակական կարծիքի հարցումների արդյունքները հիմք կծառայեն Ոստիկանության ռազմավարության մշակման համար՝ ուղղված Ոստիկանության նկատմամբ բնակչության վստահության բարձրացմանը:

Հոդված 3. Ոստիկանության կրթական բարեփոխումները

3.1. ԵԱՀԿ-ն կհրավիրի ոստիկանական կրթության գծով միջազգային փորձագետի (այսուհետև՝ Ոստիկանական կրթության գծով փորձագետ)՝ երեք ամիս ժամանակահատվածով՝ նախնական պայմանավորվածությամբ սկսած 2011թ. ապրիլի 21-ից:

3.2. Ոստիկանական կրթության գծով փորձագետն աշխատելու է 2008 թ.-ի Հուշագրի շրջանակներում ստեղծված Ոստիկանության կրթական համակարգի բարելավման հարցերով աշխատանքային խմբի հետ:

3.3. Ոստիկանական կրթության գծով փորձագետի գործողությունների շրջանակը կընդգրկի.

- Ոստիկանության կրթական հաստատությունների նոր թեստային համակարգի մշակում,
- Ոստիկանության կրթական հաստատություններ ընդունելության անկախ հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ առաջարկության մշակում,
- Ոստիկանության կրթական հաստատությունների դասախոսական կազմի վերապատրաստում՝ ուսուցման ինտերակտիվ մեթոդների գծով,
- վերոհիշյալ գործողություններից բխող այլ գործողություններ:

3.4. Ոստիկանությունը կտրամադրի Ոստիկանական կրթության գծով փորձագետին աշխատասենյակ՝ 1.1. կետում նշված ժամանակահատվածի համար:

3.5. Ոստիկանության կրթական համակարգի բարելավման հարցերով աշխատանքային խմբի համանախագահ, ոստիկանության գնդապետ Անդրիասյանը և Ոստիկանական կրթության գծով փորձագետը յուրաքանչյուր երեք շաբաթը մեկ հանդիպում են անցկացնելու ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի ռազմաքաղաքական հարցերով պատասխանատուի և Ոստիկանության բարեփոխումների համար պատասխանատու Ոստիկանության պետի տեղակալի հետ՝ զեկուցելու կատարած աշխատանքի և 1.3. կետում սահմանված գործողությունների մասով ձեռք բերած արդյունքների վերաբերյալ:

3.6. Սահմանված արդյունքներին հասնելուց հետո Ոստիկանական կրթության գծով փորձագետը ԵԱՀԿ-ի ղեկավարին և Ոստիկանության պետին կներկայացնի եզրափակիչ զեկույց, որը կպարունակի համապատասխան եզրակացություններ և, եթե նպատակահարմար է, առաջարկություններ հետագա գործողությունների վերաբերյալ:

3.7. Ոստիկանական կրթության գծով փորձագետի կողմից եզրափակիչ զեկույցում արված առաջարկությունները, ԵԱՀԿ-ի ղեկավարի և Ոստիկանության պետի հավանությանն արժանանալուց հետո, կընդգրկվեն Ոստիկանության կրթական հաստատությունների հետագա գործունեության մեջ:

Հոդված 4. Համայնքային ոստիկանության մոդելի ներդրումը

4.1. ԵԱՀԿ-ն կհրավիրի համայնքային ոստիկանության գծով միջազգային փորձագետի (այսուհետև՝ Համայնքային ոստիկանության գծով փորձագետ)՝ երկու ամիս ժամանակահատվածով՝ նախնական պայմանավորվածությամբ սկսած 2011թ. մայիսի 9-ից:

4.2. Ռազմավարական փաստաթղթերի մշակման ուղղությամբ Համայնքային ոստիկանության գծով փորձագետը գործակցելու է Ոստիկանության շտաբի պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Ղուկասյանի, Ոստիկանության Արաբկիրի բաժնի ծառայությունների գծով տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ Ավագիմյանի հետ (այսուհետև միասին՝ Հանձնախումբ)

4.3. Համայնքային ոստիկանության համակարգող, ոստիկանության գնդապետ Մեհրաբյանը կհամակարգի է Համայնքային ոստիկանության գծով փորձագետի գործունեությունը՝ կազմակերպելով հանդիպումներ, տրամադրելով անհրաժեշտ փաստաթղթեր և այլ առօրյա աշխատանքների մասով:

4.4. Ոստիկանությունը կտրամադրի Ոստիկանական կրթության գծով փորձագետին և թարգմանչին աշխատասենյակ՝ 2.1. կետում նշված ժամանակահատվածի համար:

4.5. Համայնքային ոստիկանության գծով փորձագետի գործողությունների շրջանակը կընդգրկի.

- Հայաստանի Հանրապետության Համայնքային ոստիկանության ռազմավարության մշակում, այսինքն՝ Ոստիկանության համակարգում Համայնքային ոստիկանության դերի սահմանում, երկրում Համայնքային ոստիկանության մոդելը ներդնելու համար անհրաժեշտ փոփոխությունների գնահատում,
- Երևան քաղաքում Համայնքային ոստիկանության կիրառմանն ուղղված գործողությունների պլանի մշակում,
- համայնքային ոստիկանների աշխատանքի նկարագրություն:

4.6. Հանձնախումբը յուրաքանչյուր երկու շաբաթը մեկ հանդիպումներ է անցկացնելու ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ռազմաքաղաքական հարցերով պատասխանատուի և Ոստիկանության բարեփոխումների համար պատասխանատու Ոստիկանության պետի տեղակալի հետ՝

զեկուցելու կատարած աշխատանքի և ձեռք բերած արդյունքների վերաբերյալ:

4.7. Աշխատանքներն ավարտելուց հետո Հանձնախումբը ԵԱՀԿ-ի ղեկավարի և Ոստիկանության պետի հաստատմանը կներկայացնի 2.5. կետում նշված փաստաթղթերը:

Հոդված 5. Հասարակական կարգի պահպանությունը

5.1. ԵԱՀԿ-ն կհրավիրի Հասարակական կարգի պահպանության գծով միջազգային փորձագետի (այսուհետև՝ Հասարակական կարգի պահպանության գծով փորձագետ)՝ երեք ամիս ժամանակահատվածով՝ նախնական պայմանավորվածությամբ սկսած 2011թ. հուլիսի 1-ից:

5.2. Ոստիկանությունը կտրամադրի Հասարակական կարգի պահպանության գծով փորձագետին և թարգմանչին աշխատասենյակ՝ 3.1. կետում նշված ժամանակահատվածի համար:

5.3. Ոստիկանությունը կնշանակի պատասխանատու աշխատակցի՝ աջակցելու համար Հասարակական կարգի պահպանության գծով փորձագետին՝ կազմակերպելով հանդիպումներ և դասընթացներ, տրամադրելով փաստաթղթեր և այլ առօրյա աշխատանքային հարցերով:

5.4. Հասարակական կարգի պահպանության գծով փորձագետի գործողությունների շրջանակը կընդգրկի.

- հասարակական կարգի պահպանության հարցերով խորհրդատվության տրամադրում Ոստիկանության բարեփոխումների համար պատասխանատու Ոստիկանության պետի տեղակալին,
- հասարակական կարգի պահպանության մեջ ընդգրկված ոստիկանության աշխատակիցների համար ուղեցույց-ձեռնարկի մշակում,
- գործնական վարժությունների անցկացում անկարգությունների/խռովությունների ժամանակ ներգրավվող ոստիկանության աշխատակիցների համար,
- հասարակական կարգի պահպանության գծով դասախոսների ուսուցանում:

5.5. Հասարակական կարգի պահպանության գծով պարբերաբար հանդիպումներ է անցկացնելու ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ռազմաքաղաքական հարցերով պատասխանատուի և Ոստիկանության բարեփոխումների համար պատասխանատու Ոստիկանության պետի տեղակալի հետ՝ զեկուցելու գործունեության ընթացքի մասին:

Հոդված 6. Արձանագրության տևողությունը

6.1. Սույն Լրացուցիչ արձանագրությունն ուժի մեջ է մտնում ստորագրվելու օրվանից և ուժի մեջ է մնում մինչև սույն Լրացուցիչ արձանագրությունում ամրագրված գործողությունների պատշաճ կատարումը:

Հոդված 7. Եզրափակիչ դրույթները

7.1. 2008թ.-ի Հուշագրի Հոդվածներ 7-ը և 8-ը և Հոդված 9-ի կետ 2-ը, համապատասխան փոփոխություններով, կիրառելի են սույն Արձանագրության դեպքում:

7.2. Սույն Լրացուցիչ արձանագրությունում ներառված դրույթները չպետք է սահմանափակեն ԵԱՀԿ-ի և/կամ դրա աշխատակազմի համար սահմանված արտոնությունները և անձեռնմխելիությունը:

Արձանագրությունը ստորագրված է 2011 թվականի ապրիլի 21-ին Երևանում չորս բնօրինակից՝ երկուսը հայերենով և երկուսը անգլերենով: Երկու տեքստերն էլ հավասարազոր են: Սույն Լրացուցիչ արձանագրության դրույթների մեկնաբանության կամ կիրառման հետ կապված տարաձայնություններ առաջանալու դեպքում կգերակայի անգլերեն տարբերակը:

ԵԱՀԿ երևանյան գրասենյակի
ղեկավար
դեսպան Սերգեյ Կապինոս

Հայաստանի Հանրապետության
ոստիկանության պետ
ոստիկանության գեներալ-լեյտենանտ
Ալիկ Սարգսյան